

դէպի Հնդկաստան, ուր ան կը հիմնէ Մեծ-Մողուլական կայսրութիւնը:

Թիւրքմէնները կը դադրեն դէպի Ամուղա-րիայի արեւմուտքը, Խիվա եւ Անդրկասպեան երկիրը, ուր կ'ապրին մինչեւ այսօր: Ամբողջ շրջանը ԺԹ-ըզի մէջտեղերը կ'իյնայ Պարսից Նազիր Շահի տիրապետութեան տակ, իսկ անոր մահէն վերջ դարձեալ կը վերածուի պզտիկ ազատ պետութիւններու:

Այդ ժամանակէն վերջ կային, արեւմուտքէն արեւելք համբելով Թիւրքմէններու երկիրը, Խիվան, Բուխարան եւ Խաֆանդը, որ Ռուսա-կան գրաւման ատեն դեռ կանգուն էին:

Խաֆանդի խանութեան մէջ, ԺԹ դարուն, առջ եկան Սարքերը, որոնք Թիւրքիստանի զանազան ժողովուրդներուն խառնուրդէն են կազմուած, եւ ձեռնարկեցին ամբողջ երկրի սարթացումին: Այս դործը այնքան յաջողած է այսօր, որ երկրի ամբողջ բնակչութիւնը Սարք կը կոչուի:

Միջին Ասիական տափաստաններու շրջանին մէջ ԺԵ դարէն սկսելով հեռզհեռէ կազմուեցաւ Քազախներու ժողովուրդը, ինչպէս Քըր-դըզները կը կոչեն իրենք զիրենք, ջիւջիական եւ ջղաթայական ցեղերու խառնուրդով:

ԺԷ դարուն այս ժողովուրդին վրայ արշաւեցին Քալմուկները որ յառաջացան մինչեւ Ստո-րին Վոլգա եւ իրրեւ մնացորդ ձգեցին այնտեղ ասորիստանեան Քալմուկները: Քըրզըզները (կամ Քաղաքները) մնացին Քալմուքներու տիրապետութեան տակ մինչեւ 1758 թուականը, երբ Չինացիները կործանեցին Քալմուքեան կայսրութիւնը: Այսօր այդ կայսրութեան անունը, Օյրաթ, նորէն երեւան եկած է իրրեւ քաղաքական իդէալ: Քալմուքներու լուծին տակ է որ Քըրզըզները սկսան խմորուիլ-կազմակերպուլ իրր ազգ:

ԿՈՎԿԱՍ

Ռուսական Իսլամի մեծագոյն աշխարհին կողքին Կովկասն ալ ունի իր յատուկ պատմութիւնը:

Արեւելեան Անդրկովկասը որ է դարէն իվեր իսլամացած է, քրքացած է ԺԳ դարու սկիզբէն ի վեր, երբ Ջէնգիզ-Սանի բանակին մէկ զօրա-մասը նուաճեց Անդր-Կովկասը եւ զօրքի մէկ մասը այնտեղ թողուց:

Անկէ իվեր թրքական արիւնը կրկին ու կրկին ներհոսած է հոն, այնպէս որ Թիւրուրի ժամա-նակ, ԺԵ դարու անկիւնադարձին, բնակչու-թեան քրքացումը աւարտած էր:

Այն հանգամանքը, թէ հոս, ինչպէս ոչ մէկ տեղ Ռուսաստանի մէջ, Շիխականներ կան, եւ ասոնք Սիւննիներուն եթէ ոչ գերակշիռ գէթ հաւասար են թուով, պէտք է բացատրել այն իրողութեամբ, որ Պարսկական կայսրութիւնը ԺԷ դարու սկիզբը Օսմանցիներուն ձեռքէն յալեց արեւելեան Կովկասը եւ զայն պահեց, բազմաթիւ պատերազմներու գնով, մինչեւ Ռուսական գրաւումը:

Կովկասի լեռնական բնիկ ժողովուրդները միայն ԺԷ եւ ԺԸ դարերուն մէջ ընդունեցին իսլամութիւնը, մինչ թրքական ցեղերը որ հա-րաւային Ռուսաստանի սթեփներէն քշուելով եկած են այնտեղ, իրենց հետ բերած են իսլա-մութիւնը: Ասոնք ամէնը սիւննի են:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԿԸ ՆՈՒԱՃԷ ԹՈՒՐԱՆԸ

Ռուսաստանի կողմէ այս բոլոր շրջաններու նուաճումը կատարուած է մօտաւորապէս չորս հարիւր տարիներու ընթացքին:

Իվան Դ-ն էր, որ սկսաւ մաքրել Ռսկի Հոր-դայի կազմալուծումով առաջ եկած փոքր պե-տութիւնները:

1552ին ան նուաճեց Քազանի խանութիւնը, 1554ին Հաչտարխանիւնը. իսկ 1581ին Սիբերիա-կանը: Խրիմը, որ մինչեւ Քիւչիւք Քայնարջա-յի գաշնադիրը (1774) Օսմանեան վեհապե-տութեան տակ կ'ապրէր, այդ դաշնադրով հռչակուեցաւ ազատ պետութիւն եւ քիչ յետոյ, 1783ին կցուեցաւ Ռուսաստանի:

1730էն մինչեւ Ալեքսանդր Բ-ի գահակալու-թիւնը աստիճանաբար Ռուսական տիրապե-տութեան տակ ինկան Քըրզըզները:

Քըրզըզեան տափաստաններու նուաճումին անմիջապէս յաջորդեց թուրքիստանիւնը: Ալեքսանդր Բ-ի օրով արեւելեան թուրքիստա-նը, որուն կորիզը Ֆերդանան էր եւ գլխաւոր ժողովուրդը Սարթը, ինչպէս նաեւ արեւմտ-եան թուրքիստանը, որ կը պատկանի Թիւրք-մէններուն, դարձան ռուսական նահանգներ: Իսկ Բուխարան եւ Խիվան վերածուեցան հար-կատու իշխանութիւններու: